

Հաստատված է

Վավերացնում եմ

ՀԱԱՀ գիտական խորհրդում

ռեկտոր

Ա. Թարվերդյան

„-----“, ----- 2016 թ.

„-----“, ----- 2016 թ.

(արձանագրություն №)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱԳՐՈՔԻԶՆԵՍԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ (ԱԳՐՈՔԻԶՆԵՍԻ ՈՒՍՈՒՑՆԱՆ ԿԵՆՏՐՈՆ)

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (ՀԱԱՀ) Ագրոքիզնեսի դեպարտամենտը (Ագրոքիզնեսի ուսուցման կենտրոն) (այսուհետ՝ դեպարտամենտ) Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ինքնուրույն ուսումնական կառուցվածքային ստորաբաժանում է, որը ստեղծվել է Հայաստանի գյուղատնտեսական ակադեմիայի (ՀԳԱ) խորհրդի 2003 թ. օգոստոսի 30-ի որոշմամբ՝ 2000 թ. հիմնադրված Ագրոքիզնեսի ուսուցման կենտրոնի բազայի հիման վրա:
- 1.2 Դեպարտամենտի հիմնադիրը Հայկական գյուղատնտեսական ակադեմիան է, ներկայում Հայաստանի ազգային ագրարային համալսարանը՝ ԱՄՆ Գյուղդեպարտամենտի և Տեխասի Էյ ընդ Էմ համալսարանի աջակցությամբ:
- 1.3 Դեպարտամենտի իրավասությունները և գործունեության սկզբունքները կարգավորվում են ՀԱԱՀ-ի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ:
- 1.4 Դեպարտամենտը իրավաբանական անձ չէ, ունի իր անվամբ կլոր կնիք (առանց զինանշանի) և կարող է ունենալ բանկային հաշիվներ ՀԱԱՀ-ի միջոցով և թույլտվությամբ:
- 1.5 Դեպարտամենտի լրիվ անվանումն է.
Հայերեն՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ագրոքիզնեսի դեպարտամենտ (Ագրոքիզնեսի ուսուցման կենտրոն)

Անգլերեն՝ - Agribusiness Department (Agribusiness Teaching Center) of the Armenian National Agrarian University

Ռուսերեն` - Департамент Агробизнеса (Учебный центр Агробизнеса) Национального аграрного университета Армении

1.6 Դեպարտամենտի գտնվելու վայրն է ք. Երևան - 0009, Տերյան փ. 74:

II. ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ Ու ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 Դեպարտամենտի հիմնական նպատակներն ու խնդիրներն են`

ա) Կազմակերպել Ագրոբիզնես և շուկայաբանություն մասնագիտությամբ բակալավրիական և մագիստրոսական ուսուցում, որը կհամապատասխանի բարձրագույն կրթության ՀՀ և միջազգային չափորոշիչներին, որը օրինակելի կարող է լինել Հայաստանի ազգային ագրարային համալսարանի այլ մասնագիտությունների համար:

բ) Պատրաստել մասնագետներ

- ✓ ովքեր կարող են գործնական որոշումներ կայացնել շուկայում առավելագույն արժեքներ ստեղծելու համար, հասկանալ ագրոբիզնեսի շուկայի փոփոխությունները և սոցիալական, քաղաքական, իրավական, տնտեսական, միջազգային և տեխնոլոգիական գործոնների ազդեցությունը այդ փոփոխությունների վրա:
- ✓ Ովքեր կարող են խթանել նորամուծությունները ագրոբիզնեսի կազմակերպություններում, արդյունավետորեն արձագանքել նոր իրավիճակներին և իրենց գործունեության միջոցով հնարավորություն ընձեռել ագրոբիզնեսի ձեռնարկություններին և հասարակությանը հասկանալու նման նորամուծությունների պոտենցիալը:
- ✓ Ագրոբիզնեսի կառավարման հիմնական ֆունկցիաների իմացությամբ և խնդիրների լուծման ունակություններով: Շրջանավարտները պատրաստ կլինեն հանձն առնել ղեկավար պաշտոններ և աջակցել ագրոբիզնեսի կազմակերպությունների գործունեությունը:
- ✓ Կազմակերպական ունակություններով, որոնք կկիրառեն վիճակագրության տեխնիկան` կանխագուշակելու ագրոբիզնեսի միտումները և մեկնաբանելու գործնական որոշումների քանակական մոդելները:

- ✓ Ովքեր կհասկանան միջանձնային հարաբերությունների առանձնահատկությունները և օժտված կլինեն հաղորդակցվելու ունակություններով մշակութային տարբեր խմբերում արդյունավետ աշխատելու համար:
- ✓ Այլ տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ ագրոբիզնեսի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության գիտելիքներով, որոնք կկարողանան բացահայտել բարոյագիտական խնդիրները, կընտրեն ու կպաշտպանեն գործունեության ճիշտ ուղին:

2.2 Դեպարտամենտի իրավասությունները

- ա) կազմել և վերանայել մասնագիտությունների ուսումնական պլաններ և դասընթացների առարկայական ծրագրեր և ներկայացնել հաստատման ըստ սահմանված կարգի,
- բ) ներգրավել բիզնեսի և գյուղատնտեսության միավորման խնդիրներով հետաքրքրված առաջադեմ ուսանողներին,
- գ) մշակել և իրականացնել կարիերայի զարգացման ծրագրեր, կրթական ծրագրեր ագրոբիզնեսի կառավարիչների համար, հետազոտական և կրթական աշխատանքներ ագրոպարենային համակարգում բիզնեսի տնտեսական կառուցվածքը և կառավարումը բարելավելու նպատակով,
- դ) խրախուսել դասախոսական կազմին և ուսանողներին մասնակցելու կրթական և հետազոտական գործունեությանը,
- ե) իրականացնել ուսանողների պրակտիկ ծրագրային գործունեությունը տնտեսությունների արտադրական գործունեության մարկետինգային և կառավարման ոլորտներում,
- զ) բարելավել համալսարան-արտադրություն փոխհամագործակցությունը՝ արտաքին կապերի զարգացման և խորհրդատվությունների արդյունավետ օգտագործման միջոցով,
- է) գործակցել օտարերկրյա ուսումնական, գիտական և այլ կազմակերպությունների հետ ըստ սահմանված կարգի,
- ը) աջակցել մասնագիտական գրականության հրատարակմանը,
- թ) իրականացնել անգլերեն լեզվով ուսուցում,
- ժ) հավաքագրել որակավորված դասախոսներ ըստ սահմանված կարգի,
- ի) աշխատանքի հրավիրել այցելու անվանի դասախոսների արտերկրներից,
- լ) կազմակերպել միջազգային ստանդարտներին բնորոշ հեռահար ուսուցում,

- խ) իրականացնել մագիստրոսական ուսուցում անգլերեն լեզվով միջազգային կրթական չափորոշիչներին համապատասխան,
- ծ) առաջարկություններ ներկայացնել դեպարտամենտում գիտակրթական գործունեությանն առնչվող այլ կառուցվածքային ստորաբաժանումների ստեղծման վերաբերյալ,
- կ) կիրառել Կրեդիտների փոխանցման եվրոպական համակարգը՝ ունենալով գնահատականների համապատասխանեցման կանոնները,
- հ) մասնակցել ֆոնդագոյացման աշխատանքներին:

III. ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1 Դեպարտամենտի կառավարման մարմինը՝ Դեպարտամենտի խորհուրդն է:

3.2 Դեպարտամենտի խորհուրդը

- ա) կազմում և վերանայում է աշխատակարգը,
- բ) հաստատում է Դեպարտամենտի կառուցվածքը և գործունեության կանոնակարգը,
- գ) հաստատում է Դեպարտամենտի գործունեության հիմնադրույթները և համագործակցության ուղղությունները,
- դ) առաջարկություններ է ներկայացնում Դեպարտամենտի պետին դասախոսական կազմի թեկնածությունների, ներառյալ ժամանակավոր, մշտական և այցելու դասախոսների վերաբերյալ՝ դեպարտամենտում դասավանդելու համար,
- ե) քննարկում է ուսումնական, ուսումնամեթոդական, կազմակերպչական, գիտական գործունեությանը և կադրերի պատրաստման որակավորմանն առնչվող հարցեր,
- զ) անհրաժեշտության դեպքում քննարկում և ռեկտորին սահմանված կարգով առաջարկություններ է ներկայացնում Դեպարտամենտի պետի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ,
- է) քննարկում է տարեկան բյուջեն և ներկայացնում ռեկտորի հաստատմանը:

3.3 Դեպարտամենտի խորհրդի նախագահը՝ Դեպարտամենտի պետն է:

3.4 Դեպարտամենտի խորհրդի կազմում ընդգրկվում են պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության ներկայացուցիչներ:

3.5 Դեպարտամենտի խորհրդի անդամների ընդհանուր թիվը սահմանվում է յոթ մարդ, որից հինգը՝ դասախոսներ, ներառյալ դեպարտամենտի պետը ի պաշտոնե, մեկը՝ ուսանող և մեկը վարչական աշխատակից: Օտարերկրացի դասախոսները հավասար

մասնակցություն ունեն Դեպարտամենտի խորհրդում՝ որպես լրացուցիչ անդամներ, վճռական ձայնի իրավունքով: Խորհրդի կազմն առաջադրվում է դասախոսների և աշխատակազմի ընդհանուր ժողովի կողմից և ներկայացվում ռեկտորի հաստատմանը:

3.6 Դեպարտամենտի խորհրդի նիստը համարվում է իրավագոր, եթե նիստին մասնակցում է խորհրդի անդամների թվի առնվազն 2/3-ը:

3.7 Որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Խորհրդի որոշումները համարվում են ընդունված, եթե քվեարկությանը մասնակցել են խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն 2/3-ը: Անհամաձայնության դեպքում ՀԱԱՀ ռեկտորը 7 օրվա ընթացքում խորհրդին է ներկայացնում քննարկված հարցի վերաբերյալ իր առաջարկությունը, որը վերաքվեարկվում է ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում: Եթե խորհրդի անդամների ընդհանուր թվի 2/3-ը հաստատում է նախկին որոշումը, ռեկտորը արձակում է իր համապատասխան հրամանը 3 օրվա ընթացքում:

3.8 Դեպարտամենտի խորհրդի նիստերը գումարվում են առնվազն կիսամյակը մեկ անգամ: Արտահերթ նիստերը հրավիրվում են Դեպարտամենտի պետի կամ խորհրդի անդամների առնվազն 1/3-ի առաջարկությամբ:

3.9 Դեպարտամենտի խորհրդի գործունեության ժամկետը 3 տարի է՝ յուրաքանչյուր տարի դասախոսների 1/3-ի ռոտացիայի, իսկ վարչական աշխատակցի և ուսանողների վերընտրման հնարավորությամբ:

3.10 Դեպարտամենտի պետը

ա) ընտրվում է ՀԱԱՀ Գիտական խորհրդի կողմից՝ ԱՀԿՄԿ հիմնադրամի և Տեխասի Էյ ընդ Էմ համալսարանի հետ համաձայնությամբ, առաջադրվում է գործող կարգի համաձայն և նշանակվում ՀԱԱՀ ռեկտորի հրամանով,

բ) իր իրավասության սահմաններում գործում է Դեպարտամենտի անունից, ներկայացնում նրա շահերը պետական մարմիններում, կազմակերպություններում և միջազգային ատյաններում,

գ) ձևավորում է մշտական և ժամանակավոր հանձնաժողովներ,

դ) կազմակերպում է Դեպարտամենտի կառավարման մարմնի աշխատանքը,

ե) նախապատրաստում է տարեկան բյուջեն խորհրդի անդամների հետ խորհրդատվությամբ և ներկայացնում ռեկտորի հաստատմանը,

զ) ՀԱԱՀ ռեկտորին և դոնոր հիմնադրամներին է ներկայացնում տարեկան բյուջեն՝ ֆինանսավորում ստանալու նպատակով,

- ե) կազմում և հաստատում է Դեպարտամենտի դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածությունը,
- ը) ՀԱԱՀ ռեկտորին է ներկայացնում խորհրդի կողմից հավանության արժանացած առաջարկությունները՝ Դեպարտամենտի դասախոսներին պաշտոնի նշանակելու և պաշտոնից ազատելու վերաբերյալ,
- թ) ՀԱԱՀ ռեկտորի հաստատման է ներկայացնում ուսանողների ընդունելության արդյունքները, ուսանողներին կուրսից կուրս փոխադրելու, հեռացնելու, համապատասխան արձակուրդ ձևակերպելու վերաբերյալ առաջարկությունները,
- ժ) իրականացնում է վերահսկողություն Դեպարտամենտի ուսումնական գործընթացի նկատմամբ, կազմում է դասացուցակները, վերահսկում քննությունների և ստուգարքների արդյունքները,
- ի) կազմակերպում և իրականացնում է ուսումնամեթոդական և գիտամեթոդական խորհրդակցություններ ագրոբիզնեսի ոլորտում և ակտիվորեն մասնակցում է ագրոբիզնեսի բնագավառում իրականացվող գործունեությանը,
- լ) ղեկավարում է Դեպարտամենտի խորհուրդը: Ներկայացնում է Դեպարտամենտը ՀԱԱՀ ռեկտորատում, մեթոդական խորհրդում և գիտական խորհրդում,
- խ) ՀԱԱՀ խորհրդի և գիտական խորհրդի անդամ է ի պաշտոնե,
- ծ) սահմանում է դասախոսների և աշխատակազմի աշխատավարձը և համապատասխան պայմանագրեր ներկայացնում ռեկտորի հաստատմանը:

IV. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

- 4.1 Բակալավրիատուրայի ընդունելությունը կատարվում է Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան:
- ա) ՀԱԱՀ այլ ֆակուլտետներից ուսանողները կարող են տեղափոխվել Ագրոբիզնեսի դեպարտամենտ կամ հակառակը: Տեղափոխվելու դեպքում ուսանողները պետք է հանձնեն բոլոր առարկայական տարբերությունները՝ ըստ ուսումնական պլանների: Ուսանողների տեղափոխման պրոցեսը կանոնակարգվում է ըստ կառավարության համապատասխան որոշման և ՀԱԱՀ գործող կարգով:

բ) Ազատ ունկնդրի կարգավիճակ ուսանողներին տրվում է միայն այն դեպքում, եթե կան նրանց ուսուցումը կազմակերպելու համար համապատասխան պայմաններ: Ազատ ունկնդիրը վճարում է Ագրոբիզնեսի դեպարտամենտի կողմից որոշված վարձավճարը:

գ) Դեպարտամենտում ուսանողները ենթարկվում են ուսանողների շրջափոխման գործող կարգի դրույթներին:

4.2 Ուսանողների ընտրությունը իրականացվում է ՀԱԱՀ այլ ֆակուլտետների երկրորդ կուրսն ավարտած ուսանողներից, որոնք շարունակում են իրենց ուսումը Դեպարտամենտում անգլերեն լեզվով: Ընտրությունը կատարվում է 2 փուլով.

1. Նախապատրաստական փուլի ընտրությունն անցկացվում է երկրորդ ուսումնական տարվա մայիսին տեսավորման և հարցազրույցի միջոցով:

2. Վերջնական ընտրությունը կազմակերպվում է երկրորդ ուսումնական տարվա օգոստոսին նախապատրաստական փուլի արդյունքների հիման վրա:

4.3 Բակալավրիական ծրագրին կարող են դիմել

ա) ՀԱԱՀ Ագրոբիզնես և շուկայաբնություն մասնագիտության երկրորդ կուրսն ավարտած առաջադեմ ուսանողները:

բ) ՀԱԱՀ բոլոր ֆակուլտետների, ինչպես նաև այլ պետական բուհերի երկրորդ կուրսն ավարտած առաջադեմ ուսանողները, Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության և ուսանողների տեղափոխման կանոնակարգի համաձայն:

գ) ՀԱԱՀ և այլ պետական բուհերի շրջանավարտները միայն վճարովի հիմունքներով:

դ) Ազատ ունկնդրի կարգավիճակ ունեցող ուսանողները վճարովի հիմունքներով, ովքեր չեն ստանում ՀԱԱՀ պետական նմուշի դիպլոմ:

4.4 Մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպվում է ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին օրենքի պահանջներին համապատասխան:

Ընդունելության պայմանները՝

ա) ՀԱԱՀ Ագրոբիզնեսի դեպարտամենտի <<Ագրոբիզնես և շուկայաբնություն>> մասնագիտության տվյալ տարվա շրջանավարտներն ընդունելության անվճար և վճարովի տեղերի մրցույթին մասնակցում են իրենց նախորդ ուսումնառության առաջադիմության միջին միավորի հիման վրա:

բ) ՀԱԱՀ Ագրոբիզնեսի դեպարտամենտի <<Ագրոբիզնես և շուկայաբնություն>> մասնագիտության նախկին շրջանավարտներն ընդունելության մրցույթին մասնակցում

են իրենց նախորդ ուսումնառության առաջադիմության միջին միավորի հիման վրա միայն վճարովի հիմունքներով:

զ) Մնացած բոլոր դիմորդները ընդունելության վճարովի տեղերի մրցույթին մասնակցում են հանձնելով ընդունելության քննություն:

ը) Օտարերկրյա քաղաքացիները մասնակցում են միայն վճարովի տեղերի մրցույթին ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից սահմանված կարգով:

Ընտրությունը կատարվում է 2 փուլով.

1. Նախապատրաստական փուլի ընտրությունն անցկացվում է մայիսին հարցազրույցի կազմակերպմամբ:

2. Վերջնական ընտրությունը կազմակերպվում է օգոստոսին նախապատրաստական դասընթացների քննությունների արդյունքների հիման վրա:

Մագիստրոսական ծրագրին կարող են դիմել՝

ա) ՀԱԱՀ Ագրոբիզնեսի դեպարտամենտի <<Ագրոբիզնես և շուկայաբանություն>> մասնագիտության տվյալ ուստարվա ուսման բարձր առաջադիմությամբ բակալավրի շրջանավարտները:

բ) ՀԱԱՀ այլ ֆակուլտետների և այլ բուհերի հարակից մասնագիտությունների ուսման բարձր առաջադիմությամբ բակալավրի շրջանավարտները:

գ) ՀԱԱՀ և այլ բուհերի հարակից մասնագիտությունների դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի դիպլոմ ունեցող ուսման բարձր առաջադիմությամբ շրջանավարտները:

դ) Արտերկրի քաղաքացիները:

4.5 Բակալավրիատուրայի և մագիստրատուրայի ուսման վարձավճարը սահմանվում է Ագրոբիզնեսի դեպարտամենտի կողմից:

4.6. Դեպարտամենտում սահմանվում են ուսումնական պարապմունքների հետևյալ ձևերը՝ դասախոսություն, գործնական պարապմունք, լաբորատոր աշխատանքներ, ուսումնական և արտադրական պրակտիկա, քննություններ, կուրսային աշխատանքներ, խմբային և ինքնուրույն աշխատանքներ և այլն:

4.7 Շրջանավարտներին տրվում է <<Ագրոբիզնես և շուկայաբանություն>> մասնագիտության Հայաստանի ազգային ագրարային համալսարանի պետական նմուշի դիպլոմ և ԱՄՆ Տեխասի A&M համալսարանի վկայագիր:

4.8 Ազրոբիզնեսի դեպարտամենտը բակալավրիատի ծրագրում սահմանում է ավարտական երկու պետական քննություն անգլերեն լեզվով՝ «Ազրոբիզնես և շուկայաբանություն» մասնագիտության պետական նմուշի դիպլոմ ստանալու համար:

4.9 Դեպարտամենտի Հայաստանի քաղաքացիություն ունեցող դասախոսների ընտրությունը կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

4.10. Դեպարտամենտի դասախոսներն աշխատանքի են ընդունվում ռեկտորի հետ կնքված աշխատանքային պայմանագրի հիման վրա:

4.11 Ռեկտորը հաստատում և հրամանագրում է Դեպարտամենտի աշխատակազմը և դասախոսական կազմը՝ սահմանված կարգի համաձայն:

V. ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԳՈՒՅՔԸ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Դեպարտամենտի ֆինանսավորումն իրականացնում են ԱՀԿՄԿ հիմնադրամը, Հայաստանի ազգային ազրարային համալսարանը, ՀԱԱՀ-ի և ԱՀԿՄԿ գործընկեր միջազգային և տեղական կազմակերպությունները և դոնոր հիմնադրամները:

5.1.1 Օտարերկրյա կազմակերպությունների ֆինանսավորումը չի վերահսկվում ՀԱԱՀ-ի կողմից:

5.2 Դեպարտամենտի գույքը պատկանում է ՀԱԱՀ-ին:

5.3 Ազրոբիզնեսի դեպարտամենտը օգտագործում է թափանցիկ, անկախ հաշվապահական համակարգ: Ներկայումս այն տրամադրում է ԱՀԿՄԿ հիմնադրամը: Հաշվապահական համակարգը բավարարում է ՀՀ, ինչպես նաև Դեպարտամենտի դոնորների պահանջներին:

VI. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1 Սույն Կանոնադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

6.2 Կանոնադրության մեջ փոփոխություններն ու լրացումները կատարվում են Դեպարտամենտի խորհրդի առաջարկությամբ:

6.3 Դեպարտամենտի վերակազմակերպումը և լուծարումը կատարվում է հիմնադրի որոշմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: